ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

N 138-Ա

12 մարտի 2025 թ.

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 185-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 8-րդ և 9-րդ կետերի պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սիմոն Մանուկյանին 2025 թվականի մարտի 14-ից մարտի 15-ը ներառյալ, երկու օրով, գործուղել Կոտայքի մարզ՝ Ծաղկաձոր քաղաքի «Մարիոտ» հյուրանոց, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի և ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի «Կանանց տնտեսական հզորացումը Հարավային Կովկասում» ծրագրի կողմից կազմակերպվող «Հանրային կառավարման բարեփոխումների և ՀՀ միջազգային պարտավորությունների համատեքստում հանրային ծառայության որոշ հիմնախնդիրների քննարկում» խորագրով գլխավոր քարտուղարների համաժողովին մասնակցելու նպատակով:

2. 2025 թվականի մարտի 15-ը՝ շաբաթ օրը, Սիմոն Մանուկյանի համար աշխատանքային օր համարել:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ փոխհատուցել միայն ճանապարհածախսը:

12.03.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ